ՄԱՏՐ ԱԹՈՌ

Անցեալ ցունուար ամսի վերջերին Մայր Աթոռի ձեմարանում տեղի ունեցան շատ ցաւալի դէպքեր։ Մանկավարժական ժողովը կարեւոր էր համարել ա. լսարանի երկու ուսանողի արձակել, պատճառ բերելով թէ նրանք փոքրերին ըմբոստութիւն են քարոզում ձեմարանի կարգերի դէմ և վիրաւորական ձևով քննադատութեան են ենթարկել ձեմարանի ուսուցիչներից մի քանիսի դասաւանդութիւնը։

Արձակուածների ընկերներից ուրիշ 24 հոգի էլ բարձրագոյն դասարաններից և լսարաններից միացան այդ երկուսին և յայտնեցին, որ իրենք ևս միանգամայն համաձայն են երկու արձակուածների հետ ձեմարանի այս տարուայ ուսումնական և վարչական մասի տխուր դրութեան նկատմամբ և ուրեմն եթէ դարա մասին բողոք յայտնելու համար արձակւում են նոքա, իրենք էլ իբրև համամիտ, պարտք կ'համարեն դուրս գնալ նոցա հետ ձեմարանից։ Աշակերտների մի այլ խումբ, 20—25 հոգի, խնդրում էր անուշադրութիւն նշանակել ամբողջ գործի համար։

Սակայն այս խնդիրն ու բողոքները մնացին անհետեւանք. հարկաւոր միջոցները չգործադրուեցան տաքգլուխ երիտասարդներին յետ պահելու իրենց մտադրութիւնից, և յուզուած աշակերտներին հանդարտեցնելու։ Ինչպէս և չարս հոգին թողին կամաւոր կերպով ձեմարանը և գնացին։ Նրանց հեռանալով դատարկուեցան ձեմարանի երկու լսարանները և այդ պատճառով վտանգ կայ, որ միւս տարի փակուին։

Արարատի այս համարը տպում ենք սովորականից կէս մամուլով աւելի. բայց դարձեալ հնարաւորութիւն չունեցանք բանասիրական և հրապարակախօսական կարեւոր պատրաստ յօդուածները տպել։ Ցոյս ունինք, որ Մարտից տպարանական վարչութիւնը կարող կլինի մեզ դիւրութիւններ տալ մի մամուլով մեծացնելու թերթիս ծաւալը։

Հետևեալ համարից կպենք Գերապատիւ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի յիշողութիւնները դպրոցների փակման առթիւ իւր դէպի Պետերբուրգ 1884/5 թ. կատարած ճանապարհորդութեան մասին և Տ. Երուանդ վարդապետի դերմաներէնից փոխադրած՝ պրոֆ. Տրեոլչի, «Կրօնի և կրօնի գիտութեան էութիւնը» շատ շահեկան յօդուածը։



ԿՈՎԿԱՍԻ Տ. ՓՈԽԱՐԲԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափառ Հայրապետը Փոխարքայի այցելութեան ժամանակ շնորհեց կոմսին և կոմսուհուն ս. Յակոբ Մծբնայ հայրապետի մասունքներից մի կտոր՝ ամփոփած ձեռակերտ խաչի մէջ. յետոյ՝ այդ մասունքները իրանց մօտ պահելու համար շնորհեց կոնդակ օրհնութեամբ հանդերձ, որի պատասխան կոմսը շտապեց շնորհակալական հետևեալ նամակը ուղարկել։

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹԻՒՆ,

Իմ և կնոջս անունից մատուցանում եմ մեր ի սրտէ շնորհակալութիւնը մեզ և մեր ընտանիքին ուղարկուած օրհնութեան համար։

Ս. Էջմիածին այցելելը մեզ մեծ բաւականութիւն պատճառեց և ես բախտաւոր եմ, որ շուտով կկարողանամ նորին Կայսերական Մեծութեան զեկուցանել Ձեզ հաւատացած հօտի Ձեր Սրբութեան կողմից վկայուած հաւատարիմ հպատակութեան մասին։

Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետի նշխարների մասը կպահենք և յոյս ունիմ, որ այս օրհնութիւնը իմ ամբողջ ընտանիքիս բախտաւորութիւն կբերէ և մեզ կարողութիւն կտայ մեր պարտքը կատարելու Ս. Գրքի պատուէրների համաձայն։ Կոնդակի համար կրկին շնորհակալութիւն յայտնելով՝ յանձնում եմ ինձ և ընտանիքս Ձեր սուրբ աղօթքին։

Ձեր խոնարհ ծառայ

ԳՐ. ՎԱՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎ